

23114

334.1

LI-66

XIX 24

N: 5

ᄒ ᄇ ᄃ ᄆ ᄃ ᄅ ᄆ ᄅ ᄃ ᄅ ᄆ

№ 5



F. UOL04604

7/31. 1922

ИМЕНА: МЯСНИКОВ

ИМЕНА. МЯСНИКОВ

331.

4-66

ՀԻՒԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ


 ԴՐԱՄԱՐԿՂՆԵՐ

1003

211701

ጥቅምት 2409.

Թարգմ. ՄԷ-ԴԱՅԻ

331.1
u-66

De l'U

Տղարան «ՀԵՐՄԵՍ» Գրաֆսկայա փող. № 6. Հեռախոս № 566.

1914

ՀԻՒԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ ԴՐԱՄԱՐԿՂՆԵՐ

1. ՓՈԽԱԴԱՐՁ ՕԳՆՈՒԹԵԱՆ ԴՐԱՄԱՐԿՂՆԵՐ

Հիւանդութիւնը ոչ ոքին դիւրալի չէ:

Բայց և այնպէս, կապիտալիստի հիւանդանալը, այսպէս ասած՝ կէս-դժբախտութիւն է:

— Ինչո՞ւ:

— Որովհետեւ կապիտալիստը հիւանդացաւ թէ չէ, իսկոյն բժշկի յետեւից է ուղարկում, լաւ հիւանդանոցում պարկում, օդափոխութեան կամ հանքային ջրերը գնում: Բժշկելու համար արած ծախսերը կապիտալիստին չեն վախեցնում: Նա առողջ ժամանակ աւելի շատ է ծախսում, քան հիւանդութեան օրերում:

Այլ բան է բանւորը:

Նա առողջ ժամանակ էլ կէս-կուշտ, կէս-քաղցած դրութեան մէջ է անցկացնում իր օրերը, ուր մնաց հիւանդ ժամանակ: — Աչքդ ճամբին գցիր, որ քեզ համար հաց բերեն, տաք կերակուր... Բժիշկ կանչեցիր — պէտք է վճարես. բայց ո՞րտեղից, ո՞ր գումարից: Չէ՞ որ ոչինչ չես ստանում գործարանից:

Ստիպւած, ոչ միայն ունեցածիդ աւելորդը, այլ և անհրաժեշտը տանելու ես գրաւ դնելու:

Ցաւին դարման կարելի է անել հիւանդանալու դէպքերի համար փոխադարձ օգնութեան դրամարկղներ հիմնելով:

Բայց ի՞նչպէս:

— Հազար բանւոր խօսք են կապում, որ ամեն ոռճիկ ստանալիս՝ մարդագլուխ 20-ական կոպէկ հաւաքեն: Այդ քսանական կոպէկներից երկուշաբթի մի անգամ հաւաքւում է 200 ուրբլի, իսկ մի տարում՝ 5 հազար ուրբլուց աւելի: Այս 5 հազար ուրբլին դառնում է մի դրամագլուխ,

որից այնուհետեւ կարելի է նպաստ տալ, օգնել հիւանդացողներին:

Եւ որովհետեւ փող հաւաքելու, նպաստ տալու համար հարկաւոր է կազմակերպութիւն, ուստի մեր առած հազար քանւորը հաւաքւում են, ընդհանուր ժողով կազմում և այդ ժողովում մի քանի հոգուց վարչութիւն ընտրում:

Այդ վարչութեան պարտականութիւնն է՝ փող ժողովել, նպաստներ տալ: Որպէսզի վարչութիւնը կարողանայ իմանալ, թէ ի՞նչ պայմաններում և ո՞րքան է նպաստ տալու — ընդհանուր ժողովը մշակում է փոխադարձ օգնութեան դրամարկղի կանոնադրութիւն: Վարչութիւնը գործում է կանոնադրութեան հիման վրայ: Տարեկան գոնէ մի անգամ ընդհանուր ժողով է հրաւիրւում, ուր վարչութիւնը ներկայացնում է իր գործունէութեան հաշւետւութիւնը:

Փոխադարձ օգնութեան դրամարկղը միայն հիւանդանալու դէպքում չէ որ նպաստներ է տալիս: Եթէ դրամարկղի հիւանդ անդամը մեռնի, նրա թաղման համար էլ նպաստ է տրւում: Դրամարկղը կարող է նպաստ տալ և ծննդաբերութեան դէպքերում: Վերջապէս դրամարկղը կարող է հիմնել հիւանդանոց և իր անդամներին բժշկական օգնութիւն հասցնել:

Այս բոլորին բաւարարութիւն տալու համար՝ դրամարկղին վճարած մեր քսան կոպէկը պէտք է քիչ համարել, այսինքն պէտք է աւելացնել: Դրամարկղը իր հազար անդամով հիւանդանոց հիմնելու անգոր կլինէր: Ուստի բժշկական օգնութիւն հասցնելու համար պէտք է միահամուռ ոյժերով, մի քանի տասնեակ, նոյն իսկ հարիւր հազար բանւորներ մի դրամարկղ հիմնեն:

Մեր նկարագրած փոխադարձ օգնութեան դրամարկղը այլ կերպ կարելի է անւանել՝ կամաւոր հիւանդանոցային դրամարկղ:

Այդ տեսակ կամաւոր հիւանդանոցային դրամարկղներ շատ են տարածւած արտասահմանում, իսկ մեզ մօտ սակաւ են պատահում:

II. ՊԱՐՏԱԴԻՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ ԴՐԱՄԱՐԿՂՆԵՐԸ ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ:

Հիւանդացող բանւորը, հիւանդութեան միջոցին ունենալիք ծախքերի համար ոչ մի տեղից փող ստանալու յոյս չունի: Կամաւոր հիւանդանոցային դրամարկի տնդամովճառը՝ համեմատած հիւանդ ժամանակ ունենալիք ծախքի հետ՝ մեծ չէ, բայց և այնպէս այդ վճարն էլ ահագին ծանրութիւն է բանւորի համար, եթէ նկատի ունենանք նրա աշխատավարձը:

Կամաւոր հիւանդանոցային դրամարկիներին մասնակցում են լաւ աշխատավարձ ստացող բանւորները՝ ամբողջ բանւորութեան չնչին մասը:

Երեսուն տարի սրանից առաջ, Գերմանիայում գոյութիւն ունէին մի քանի հազար կամաւոր հիւանդանոցային դրամարկ: 1884 թւին հրատարակեց բանւորների հիւանդութիւնից ապահովագրելու օրէնքը: Այդ օրէնքով հիմքը դրեց պարտադիր հիւանդանոցային դրամարկիներին:

Ամեն մի բանւոր պարտաւոր է այդ տեսակ դրամարկիներէ մէկն ու մէկի անգամ լինելու: Ամեն անգամ, աշխատավարձ ստանալիս, նրանից պարտաւորեցուցիչ յետ է պահւում, կամ ստացւում է հիւանդանոցային դրամարկի վճարը: Ամեն մի բանւորի տալիքի չափն էլ գործարանատէրն է որոշում:

Գերմանական ձևի պարտադիր հիւանդանոցային դրամարկիները շատ բանով բարձր են կամաւորներից: Նրանց մէջ մասնակցելը պարտադիր է ամեն մի բանւորի համար: Հիւանդանոցային դրամարկիների միջոցները գոյանում են ոչ միայն բանւորների, այլ և տէրերի վճարումներից:

Բայց և այնպէս գերմանական դրամարկիներն էլ իրանց վատ կողմն ունեն: Ընդհանուր ժողովներին և հիւանդանոցային դրամարկիների վարչութեան մէջ մասնակցում են տէրերի ներկայացուցիչները: Պարտադիր հիւանդանոցային դրամարկիներում բանւորների անկախութիւնը աւելի է սահմանափակւած, քան կամաւորների մէջ:

III. ՊԱՐՏԱԴԻՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ ԴՐԱՄԱՐԿՂՆԵՐԸ ԱՆԳԼԻԱՅՈՒՄ:

Մինչև վերջին տարիները Անգլիայում գոյութիւն ունէին բազմաթիւ կամաւոր հիւանդանոցային դրամարկիներ, կամ այսպէս անւանած «բարեկամական ընկերութիւններ»:

1911 թւին Անգլիայում հրատարակեց բանւորների ապահովագրութեան օրէնքը: Կամաւոր հիւանդանոցային դրամարկիները վերափոխեցին պարտադիրների: Մասնակցելու պարտաւոր են անգլիական բոլոր բանւորները: Բոլորը պէտք է տան հիւանդանոցային դրամարկի վճար: Բանւորների վճարածից փոքր ինչ աւել տալիս են տէրերը: Տէրերի վճարածի կիսի չափ էլ մտցնում է անգլիական գանձարանը:

Թէ ընդհանուր ժողովներին, թէ անգլիական հիւանդանոցային դրամարկիների վարչութիւնների մէջ մասնակցութիւն չունեն ոչ տէրերը եւ ոչ էլ կառավարչական աստիճանաւոր-չինովնիկները: Բացի դրանից, օրական 75 կոպէկից պակաս աշխատավարձ ստացող բանւորները ազատւում են վճարից, ստանալով հիւանդանոցային դրամարկին դրամապէս մասնակցողների հետ հաւասար թէ նպաստ և թէ բժշկական օգնութիւն:

Անգլիական հիւանդանոցային դրամարկը աւելի լաւ է բանւորների համար, քան գերմանականը: Բոլոր երկիրների բանւորները ձգտում են ունենալ այն տեսակ հիւանդանոցային դրամարկիներ, ուր բոլոր բանւորները ազատւելին վճարելուց: Հիւանդանոցային դրամարկիների ղեկավարութիւնը, անգլիականի նման, պէտք է լինի իրանց՝ բանւորների ձեռքում:

IV. ՀԻՒԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ ԴՐԱՄԱՐԿՂՆԵՐԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԱՆՈՒՄ:

1912 թւի յունիսի 23-ի օրէնքով, մեզ մօտ էլ գոյութիւն են ունենալու պարտադիր հիւանդանոցային դրամարկիներ: Բայց նրանք պարտադիր են ոչ խոշոր բանւոր-

ներէ համար: Դրամարկդներին կարող են մասնակցել միայն խոշոր գործարանների բանւորները: Եթէ գործարանում բանւորների թիւը 20-ից պակաս է, նրանք չեն մտնում պարտադիր հիւանդանոցային դրամարկդի անդամների շարքը, իսկ եթէ քսանից աւելի է և 30-ից պակաս, ապա նրանք կարող են մասնակցել այն դէպքում, երբ գործարանը աշխատում է շոգեկաթսանների, շոգեշարժերի և ելէքտրաշարժերի օգնութեամբ:

Ռուսաստանում վարձու բանւորների և ծառայողների թիւը 13 միլիոն է: Մեր պարտադիր հիւանդանոցային դրամարկդը պարտադիր չէ 10 միլիոն պրոլետարիատի համար: Նա պարտադիր չէ մանր գործարանների բանւորների, արհեստավորների, շինարարական, արքունական բանւորների, գործակալատարների համար: Մեր հիւանդանոցային դրամարկդները պարտադիր են միայն 3 միլիոն բանւորների համար:

Մեր հիւանդանոցային դրամարկդները գործելու են գերմանական ձևով:

Բանւորներից, իւրաքանչիւր անգամ, աշխատավարձ «մուզզ» ստանալիս, պարտավորեցուցիչ է հիւանդանոցային դրամարկդի վճար յետ պահին: Բանւորից յետ պահած ամեն մի 3 կոպէկին տէրը աւելացնելու է 2 կոպէկ:

Դրամարկդի գործավարութեան մէջ մասնակցելու են թէ բանւորները և թէ տէրերը. բացի դրանից մեր հիւանդանոցային դրամարկդը կառավարելու մէջ խոշոր տեղ է յատկացրած աստիճանատու-չինովնիկներին:

Հիւանդանոցային դրամարկդը գտնւելու է Ապահովագրութեան Նահանգական Ատեանի հսկողութեան տակ. — Ատեանը բաղկացած է նահանգապետից, եօթ չինովնիկից, զեմստվոյի երկու ներկայացուցչից, քաղաքի՝ մի, տէրերի՝ երկու ներկայացուցչներից և հիւանդանոցային դրամարկդին մասնակցող բանւորների միայն երկու ներկայացուցչից: Հիւանդանոցային դրամարկդի ընդհանուր ժողովներին կարող է ներկայ լինել ոստիկանութեան ներկայացուցիչը:

Ապահովագրական բարձր հիմնարկութիւնը — Ապահովագրական Խորհուրդը բաղկացած է՝ առևտրի և արդիւնաբերութեան մինիստրից, 15 չինովնիկից, Պետերբուրգի զեմստվոյի և քաղաքի մի-մի ներկայացուցչներից, տէրերի հինգ և քանւորների միայն հինգ ներկայացուցչներից:

Մեր հիւանդանոցային դրամարկդները անհամեմատ վատ են անգլիականից և վատ՝ գերմանականից: Այնտեղ բանւորները աւելի ազատ են տէրերի մասնակցութիւնից և միանգամայն ազատ ոստիկանական չինովնիկներէ միջամտութիւնից:

Այնուամենայնիւ, Ռուսաստանի 3 միլիոն բանւորները պէտք է եռանդուն մասնակցութիւն ցոյց տան հիւանդանոցային դրամարկդներին: Նրանց, միևնոյն է, հաշւելու են հիւանդանոցային դրամարկդների պարտադիր անգամ, վրձարները, առանց այն էլ ամեն անգամ յետ են պահելու նրանց աշխատավարձից:

Եթէ բանւորները բոյկոտի ենթարկեն *) դրամարկդները, ապա նրանց ղեկավարելու են տէրերը, վարպետները, աւագ բանւորները և այլն: Վերջ ի վերջոյ բանւորին սպասում է բժախնդրութիւն և ճնշում հիւանդանոցային դրամարկդից օգտւելու միջոցին:

Բանւորները աշխատելու են հիւանդանոցային դրամարկդները իրանց ձեռքը ձգել: Նրանք բանւորների միութեան և շարքերի խտացման գործին մեծ ծառայութիւն կարող են մատուցել:

V. ՀԻԻԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ ԴՐԱՄԱՐԿՂՆԵՐԻ ԲԱՅՈՒՄԸ

Ամեն մի հիւանդանոցային դրամարկդ ունենալու է իր կանոնադրութիւնը: Հիւանդանոցային դրամարկդը կա-

*) «Ապահովագրութեան» սկզբնական շրջանում կար մի հոռանք, որ աշխատում էր բանւորների մէջ տարածել հարցը «բոյկոտի» ենթարկելու և ապահովագրութեանը անտարբեր նայելու միտքը, բայց այդ «հոռանքը» հետեւողներ չունեցաւ...

բող է օգտուել նորմալ կանոնադրութեամբ: Այդ կանոնադրութիւնը հրատարակել է Ապահովագրական Խորհուրդը: Հստ նորմալ կանոնադրութեան, գրամարկղի բացումը կախած է գործարանային տեսչից: Եթէ հիւանդանոցային կանոնադրութիւնը տարբերուում է նորմալ կանոնադրութիւնից, այն ժամանակ այդ տեսակ կանոնադրութիւնը հաստատուելու է Ապահովագրական Ատեանից:

Մինիստրութեան կարծիքով, այդ տեսակ հիւանդանոցային գրամարկղներ բացուելու են թուով չորս հազար, բացուելու էին 1913 թւի ընթացքում: 1914 թւի սկզբին բոլոր գրամարկղները արդէն սկսելու են իրանց գործունէութիւնը:

Օրէնքի համաձայն, ամեն մի 200-ից աւելի բանւոր աշխատեցնող ձեռնարկութեան կից բացուելու է առանձին հիւանդանոցային գրամարկղ: Այս գրամարկղները, այսպէս կոչւած գործարանային հիւանդանոցային գրամարկղներ են: 200-ից պակաս բանւոր ունեցող ձեռնարկութիւններից մի քանիսը միանում են և բանում մի ընդհանուր գրամարկղ: Իւրաքանչիւր ընդհանուր գրամարկղ ունենալու է 200-ից ոչ պակաս անդամ:

Գործարանային գրամարկղի կանոնադրութեան նախագիծը կազմում է տէրը, իսկ ընդհանուր գրամարկղի կանոնադրութեան նախագիծը՝ այն միացած ձեռնարկութիւնների տէրերը, որոնցից Ապահովագրական Ատեանը մտադրում է բանալ ընդհանուր գրամարկղ:

Տէրերը պարտաւոր են «լսել» բանւորների և ծառայողների լիազօրների յայտնած կարծիքը՝ իրանց կազմած կանոնադրութեան նկատմամբ:

Բանւորները պէտք է լիազօր ընտրեն ամենից խելօք և կայուն ընկերների: Լիազօրները պէտք է ուղղումներ մտցնեն տէրերի կազմած կանոնադրութեան մէջ:

Բոլոր բանւորները աշխատելու են, որ կանոնադրութիւնը լիովին համապատասխանի նրանց շահերին:

VI. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ ԵՒ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Հիւանդանոցային գրամարկղները կառավարելու են ընդհանուր ժողովը և վարչութիւնը: Հիւանդանոցային գրամարկղների ընթացիկ գործերը վարելու է վարչութիւնը: Նա ստանալու է բանւորների վճարները և տէրերի աւելացումները. նա է տալու նաև նպաստները:

Ընդհանուր ժողովը ղեկավարելու է հիւանդանոցային գրամարկղի գործերը: Նա ընտրում է վարչութեան անդամ բանւորներին. նա է և վերաստուգիչ յանձնաժողով ընտրողը:

Օրէնքի համաձայն, հիւանդանոցային գրամարկղի ընդհանուր ժողովին մասնակցելու իրաւունք ունեն բոլոր անդամները. ընդհանուր ժողովի անդամ են համարուում և բանւորների ու ծառայողների լիազօրները: Լիազօրների թիւը 100-ից աւել լինել չի կարող:

Ընդհանուր ժողովին մասնակցելու համար, տէրը իր կողմից նշանակում է ներկայացուցիչներ: Տէրերի ներկայացուցիչների ընդհանուր թիւը որոշուում է այսպէս. — բանւորների ամեն մի նրքը ձայնի դիմաց՝ տէրերի ներկայացուցիչները ունեն երկու ձայն:

Վարչութեան անդամների թիւը լինելու է ոչ-զոյգ (կէստ), օրինակ՝ եօթ հոգի: Սրանցից չորսին ընտրում են բանւորների և ծառայողների լիազօրները ընդհանուր ժողովում: Մէկով պակաս — այսինքն, եթէ վարչութիւնը եօթ անդամից լինի բաղկացած, — երեքին նշանակում է տէրը:

Ընդհանուր ժողովին նախագահ է հանդիսանում տէրը. բայց նա կարող է հրաժարուել և այդ դէպքում ընդհանուր ժողովը նախագահ է ընտրում իր միջից:

Հիւանդանոցային գրամարկղի կանոնադրութեան մէջ կարելի է գտնել մի ցուցմունք, ուր ասւած է, թէ վարչութեան նախագահողը տէրն է: Բայց կարող է պատահել, որ այդ ցուցմունքը բացակայի. այն ժամանակ վարչութեան նախագահ է ընտրուում անդամներից մէկը:

Օրէնքի համաձայն, տէրը կարող է հրաժարել ընդհանուր ժողովին կամ վարչութեան մէջ իր ներկայացուցիչները ունենալուց: Եթէ իրօք տէրը հրաժարւի, ապա դրամարկղի գործավարութիւնն անցնում է իրանց՝ բանւորների ձեռքը:

Հիւանդանոցային դրամարկղի գանձապահը—ըստ օրէնքի—լինելու է տէրը. բայց նա կարող է այդ պաշտօնը յանձնել յատուկ լիազօրեաժ անձնաւորութեան:

Մենք տեսնում ենք, որ ամենավատ դէպքում, հիւանդանոցային դրամարկղը լինելու է տիրոջ տրամադրութեան տակ, իսկ լաւ դէպքերում—բանւորների:

Ուստի պէտք է ձգտել լիազօր ընտրելու արժանաւոր ընկերների, պէտք է ամեն կերպ աջակցել նրանց: Այն ժամանակ քիչ թւով կլինեն վատ դէպքեր և յաճախ լաւ:

VII. ՎՃԱՐՆԵՐ ԵՒ ՆՊԱՍՏՆԵՐ

Ըստ օրէնքի, բանւորները հիւանդանոցային դրամարկղին, ամեն աշխատավարձ ստանալիս, վճարելու են ռուբլուց մի կոպէկ: Եթէ հիւանդանոցային դրամարկղին մասնակցում են 400-ից աւելի բանւոր, այն ժամանակ բանւորները այդ դրամարկղին վճարելու են ստացած ռուբլուց երկու կոպէկից ոչ աւել: Եթէ հիւանդանոցային դրամարկղին մասնակցողների թիւը 400-ից պակաս է, այն ժամանակ վճարները—ստացած ամեն ռուբլուց—երեք կոպէկից աւել լինել չի կարող:

Հիւանդանոցային դրամարկղի ընդհանուր ժողովը պէտք է որոշի իւրաքանչիւր տարի լինելիք բանւորական վճարների չափը: Նա կարող է որոշել, որ բանւորների ստացած ռուբլուց յետ պահի մէկ, երկու, երեք կոպէկ, կամ կոպէկուկէս, կոպէկ ու մի քառորդ, երկուսուկէս, երկու և երեք քառորդ և այլն:

Բանւորի վճարած ամեն մի 3 կոպէկին տէրն աւելացնելու է 2 կոպէկ: Բանւորների աշխատավարձից յետ պահածը իր աւելացրածի հետ տէրը մտցնում է հիւանդանոցային դրամարկղ:

Հիւանդանոցային դրամարկղը պարտաւոր է տալ հետեալ նպաստները.

Բանւորի հիւանդանալու դէպքում, երբ նա աշխատանքի գնալու անկարող է, նրան տրւում է նպաստ ամբողջ հիւանդութեան ընթացքում, բայց ոչ աւել, քան 26 շաբաթ՝ հաշւելով հիւանդութեան սկզբից: Կրկնող հիւանդութիւնների ժամանակ, բանւորները կարող են ստանալ նպաստ տարեկան 30 շաբաթից ոչ աւել: Ասենք թէ, այս տարի բանւորը դրամարկղից նպաստ է ստացել տաս շաբաթ, այնուհետև նա առողջացել է, մի քանի օր աշխատել և նորից հիւանդացել: Հիմա նա արդէն կարող է ստանալ նպաստ միայն 20 շաբաթ: Աշխատաւորական հաշմանդամութեան, «սախատութեան» դէպքում, երբ հիւանդութիւնը բանւորին թոյլ չի տալիս գործի գնալու, հիւանդանոցային դրամարկղը նպաստ է տալիս ոչ աւել, քան 13 շաբաթ: 13 շաբաթ անցնելուց յետոյ նրան նպաստ է տրւում տէրերի միջոցներից (Ապահովագրական ընկերութիւնից):

Ծննդաբերութեան դէպքերում, բանւորուհիներին նպաստ է տրւում ծնելուց երկու շաբաթ առաջ և չորս շաբաթ յետոյ եղած ժամանակամիջոցում, այսինքն վեց շաբաթ: Այդ ժամանակամիջոցում բանւորուհին պէտք է չգնայ աշխատելու:

Դրամարկղի անդամի մահւան դէպքում նպաստ է տրւում թաղման համար: Նպաստը ստանում է նրան թաղողը:

Նպաստների քանակը ըստ օրէնքի հետեւեալն է. հիւանդութեան և հաշմանդամութեան դէպքում, նպաստը չի կարող լինել աշխատավարձի քառորդից պակաս—հիւանդանոցի միայնակ անդամների և կիսից պակաս ընտանիքաւորների համար: Նպաստները չեն կարող աշխատավարձի կիսից աւելի լինել մենակեցների և երեք քառորդից՝ ընտանիքաւորների համար:

Ծննդաբերութեան դէպքում տրւող նպաստը դրամարկղի մէջ մասնակցող բանւորուհու աշխատավարձի երկու

երոտորոնց պակաս լինել չի կարող, բայց ամբողջ աշխատավարձից էլ բարձր լինել չի կարող:

Թաղման նպաստը աշխատավարձի քսանապատիկից պակաս և երեսնապատիկից ավել լինել չի կարող:

Նպաստների ճիշտ չափը ամեն տարի նախապէս որոշուում է **Բնակարանային ժողովի կողմից:**

Ասենք թէ միայնակ բանւորը օրական մի **ռուբլի է աշխատում:** հիւանդանոցում գէպքում նա զբամարկղից կարող է ստանալ օրական 25-ից մինչև 50 կոպէկ: Նայելով ընդհանուր ժողովի անցեալ որոշման, նա օրական կստանայ կամ 25, կամ 28, կամ 30, կամ 40, կամ 45 կ. և այլն: Եթէ նա մեռնի, թաղման համար կտուրի կամ 20, կամ 25, կամ 27, կամ 30 **ռուբլի:**

Ընդհանուր ժողովը կարող է հաստատել խոշոր նպաստներ, եթէ զբամարկղում բաւական փող լինի. իսկ միջոցներ շատ կլինեն այն գէպքում, երբ վճարները մեծ կլինեն:

Ուստի բանւորները, ուղեն-չուղեն, պէտք է բարձր վճար նշանակեն, այսինքն ստացած **ռուբլուց 2 կոպէկ** այն զբամարկղներին, որոնց մասնակցողների թիւը 400-ից ավելի է և 3 կոպէկ—400-ից պակաս անդամ ունեցող զբամարկղներին:

Բայց բանւորները յիշելու են մի բան, որ որքան քարձր լինի նրանց վճարը, այնքան ավելի է լինելու տիրոջ տւածը զբամարկղին:

Բացի դրանից, ուսանելի է գերմանական բանւորների օրինակը: Նրանք չեն մոռանում, որ պէտք է ձգտել բարձր աշխատավարձ ստանալու. ուստի նրանց համար այնքան զգալի է հիւանդանոցային զբամարկղին վճարներ տալը:

VIII. ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹԻԻՆ

Ներկայումս տէրերը պարտաւոր են բանւորներին բժշկական օգնութիւն հասցնել իրանց հաշին: Այս պարտականութիւնը նրանց վրայ դրել է 1866 թւի օրէնքը:

Տէրերը մինչև օրս շատ վատ էին կատարում օրէնքի պահանջը:

Բանւորները կամ բոլորովին չէին ստանում բժշկական օգնութիւն, կամ թէ, եթէ ստանում էին—շատ վատ:

1912 թւի յունիսի 22-ի օրէնքը, ըստ հին ձևի՝ բժշկական օգնութիւնը թողնում է տէրերին: Միայն նա թողնում է տէրերին, որ նրանք բժշկական օգնութիւնը յանձնեն հիւանդանոցային զբամարկղին—**վճարելով վերջինին առանձին վճար:**

Եթէ տէրը բժշկական օգնութիւնը յանձնի հիւանդանոցային զբամարկղին, ապա այժմեան զբութիւնը կւանայ:

Բանւորները ձգտելու են, որ տէրերը բժշկական օգնութեան գործը յանձնեն հիւանդանոցային զբամարկղներին:

IX. ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹԻԻՆ ԵՒ ԲԱՆՈՐՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՏԱԼԻՔ ՆՊԱՍՏԸ

1912 թւի յունիսի 23-ի օրէնքով տէրերը պարտաւոր չեն բանւորների ընտանիքներին բժշկելու. հիւանդանոցային զբամարկղները պարտաւոր չեն նպաստ տալ բանւորի կնոջը, զաւակներին և ընտանիքի այլ անդամներին:

Օրէնքը թողնում է հիւանդանոցային զբամարկղներին բժշկական օգնութեան հասնել և նիւթական (զբամական) նպաստ տալ բանւորների ընտանիքներին:

Բանւորները ձգտելու են, որ հիւանդանոցային զբամարկղները նրանց ընտանիքներին իսկապէս բժշկական օգնութիւն հասցնեն և նիւթական նպաստ տան:

X. ՎԱՏ ԵՒ ԼԱԻ ՀԻՒԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ ԴՐԱՄԱՐԿՂՆԵՐ

Դժւար է պատկերացնել վատ հիւանդանոցային զբամարկղը:

Դրամարկղին մասնակցողները լինելու են 200, կանոնադրութիւնը կազմելու է տէրը: Բանւորները կանոնա-

դրութեան մէջ ոչ մի փոփոխութիւն մտցնել չեն կարող:

Ըստ կանոնադրութեան, ընդհանուր ժողովը կլինի շատ սակաւամարդ: Տիրոջը ձեռնառու է ընդհանուր ժողովում գործ ունենալ բանւորների փոքրաթիւ լիազօրների հետ: Ընդհանուր ժողովում լինելու են 6 բանւոր: Ընդհանուր ժողովին նախագահելու է ինքը տէրը: Ըստ օրէնքի, նրան ու իր ներկայացուցիչներին պատկանելու է չորս ձայն: Տէրը կուզենայ դրամարկղի գործերը վարել ընտանեբար, «տանավարի»։ Նա ընդհանուր ժողով կգնայ իր կնոջ հետ, կհրաւիրի իր գործարանային փաստաբանին, կամ այսպէս ասած «իւրիսկոնսուլտին»։ Իրեն կպահի երկու ձայն, կնոջ ու փաստաբանին էլ կտայ մի-մի ձայն:

Բայց եթէ տէրը թէկուզ մի ձայն ունենար, այն փամանակ էլ բանւորների համար դժւար կլինէր նրան հակառակ խօսել: Անհնազանդ լիազօրին իսկոյն դուրս կանէր: Վարչութեան մէջ էլ տէրն է նախագահ լինելու: Բացի դրանից, վարչութեան մէջ լինելու են երկու բանւոր, որոնց ընտրելու են բանւորական վեց լիազօրները ընդհանուր ժողովում: Վարչութեան մէջ էլ, ըստ երևոյթին, տնօրէնը տէրն է լինելու:

Բժշկական օգնութիւնն էլ նրա ձեռքին է լինելու: Բացի եօղից ու լուծողականից (կաստորկա) բանւորները ոչինչ չեն կարող ստանալ: Այս է ամենավատ դրամարկղը:

Աւելի մեծ գործարանին կից գործարանային դրամարկղները, հասկանալի է, որ որոշ չափով տարբերւելու են նկարագրածից: Բայց և այնպէս, մեծ գործարանային դրամարկղն էլ շատ բանով նմանւելու է մեր բերած օրինակին:

Իբր կանոն, 1912 թւի օրէնքը հաստատել է հենց այդ տեսակ մանր ու վատ դրամարկղներ: Օրէնքը այնուամենայնիւ թոյլ է տալիս շեղել այդ կանոնից:

Օրէնքը փոքր գործարաններին պարտաւորեցնում է միանալ՝ ընդհանուր դրամարկղ հիմնելու համար: Օրէնքը թոյլատրում է միանալու և խոշոր գործարաններին մեծ

դրամարկղներ կազմակերպելու: Օրէնքը՝ գործող հիւանդանոցային դրամարկղներին թոյլ է տալիս միանալու:

Օրէնքի հիման վրայ հնարաւոր է լաւ հիւանդանոցային դրամարկղներ կազմակերպել: Այս տեսակ դրամարկղը պէտք է միացնի տւեալ քաղաքի կամ տեղի բանւորներին:

Եթէ այդ տեսակ հիւանդանոց հիմնի Պետերբուրգում, ապա նրան մասնակցողների թիւը հասնելու է 150 հազարի:

Այդ դրամարկղի գործունէութիւնը լինելու է այլ կերպ:

Հիւանդանոցային դրամարկղի գործերը կըննեն ամեն մի գործարանում առանձին: Իւրաքանչիւր գործարանի բանւորներն ընտրելու են լիազօրներ՝ թւով 100 բանւորի՝ ընդհանուր ժողովին մասնակցելու համար: Ընդհանուր ժողով կայանալու է տարեկան երկու անգամից ոչ պակաս: Ընդհանուր ժողովի ընթացիկ գործերը վարելու համար ընտրւելու է վարչութիւն:

Այս տեսակ դրամարկղներում արդէն տէրերը չեն կարող տնօրէն լինել. նրանք, բացի դրանից, կարող են բոլորովին հրաժարւել թէ ընդհանուր ժողովին և թէ վարչութեան մէջ մասնակցելուց: Լաւ հիւանդանոցային դրամարկղը կարող է բանւորներին բժշկական օգնութիւն հասցնելու գործը լաւ հիմքերի վրայ դնել: Նա կարող է գլուխ բերել նաև բանւորների ընտանիքներին դրամական և բժշկական օգնութեան գործը:

Գերմանիայում այդ տեսակ լաւ հիւանդանոցային դրամարկղներ շատ կան: Վաղ թէ ուշ լաւ դրամարկղներ հիմնւելու են և մեզ մօտ:



ՀՐԱՏԱՐԱԿՈՒՅԻՆ ՏՊԱԳՐԱԿԱՆ ԲԱՆՈՒՐՆԵՐԻ

Լ Ո Յ Ս Ե Ն Տ Ե Ս Ե Լ

«ՆՈՐ ԳՐԱԴԱՐԱՆԻ» հետևեալ հրատարակութիւնները.

- 1) ՄԱՔՍԻՄ ԳՈՐԿԻՅ—Երկու պատմաւածք X-XI թարգմ. Յ. Յակոբեանի 5 կող.
- 2) Ա. ԲՕԳԻՍԵՆՈՎ—Մարդու և մեքենայի միջև թարգմ. Սէ-Դայի 5 կող.
- 3) «ԿԱՐՄԻՐ ՄԵՆԱԿՆԵՐ» (ինքնուրոյն հանրամատչելի ժողովածու) 5 կող.
- 4) «ԿԱՐՄԻՐ ՄԵՆԱԿՆԵՐ» Երկրորդ պրակ ժողովածու 5 կող.
- 5) Բ. ՍՕԼՈՎԵՆՈՎ—Հիւանդանոցային դրամարկներ թարգմ. Սէ-Դայի 2 կող.



Դիմել՝ Թիֆլիսի բոլոր գրավաճառներին

ՀՀ Ազգային գրադարան



NL0197350

